« 24 » հուլիս 2024թ. No 4034 - Ա

«ՊԱԼԻԱՏԻՎ ԽՆԱՄՔ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ

Օգոստոսի 5-16, 2024թ. (շարունակաբար), ք. Երևան («Վ.Ա. Ֆանարջյանի անվան Ուռուցքաբանության ազգային կենտրոն (ՈՒԱԿ)» ՓԲԸ՝ Ֆանարջյան 76)

ՀՀ ԱՆ «Վ.Ա. Ֆանարջյանի անվան Ուռուցքաբանության ազգային կենտրոն (ՈՒԱԿ)» ՓԲԸ

- Թիրախային լսարան՝ պալիատիվ բժշկության մասնագետներ, մանկաբույժներ, անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգներ, կլինիկական հոգեբաններ, բուժքույրեր
- Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 1-30 հոգի
- մասնակից ավագ բուժաշխատողներին շնորհել ՇՄՋ 35 տեսական և 5 գործնական կրեդիտ.

  մասնակից միջին բուժաշխատողներին՝ ՇՄՋ 28 տեսական և 4 գործնական կրեդիտ,

  դասավանդող Նարինե Մովսիսյանին՝ ՇՄՋ 35 տեսական և 5 գործնական կրեդիտ
- Կոնտակտ՝ 010205050

Շաբաթ 1	
Օր 1՝ օգոստոսի 5	
15:00-17:00	**Դասախոսություն** Պալիատիվ խնամք - առողջապահության համակարգի անբաժանելի մաս
17:00-17:10	Ընդմիջում
17:10-19:10	**Դասախոսություն** Պալիատիվ խնամքի պացիենտի գնահատում
Օր 2՝ օգոստոսի 6	
15:00-17:00	**Դասախոսություն** Ցավի սուր/քրոնիկ կառավարման ժամանակակից սկզբունքները: Քաղցկեղային ցավ, մեխանիզմները, բուժման սկզբունքները
17:00-17:10	Ընդմիջում
17:10-19:10	**Դասախոսություն** Նեյրոպատիկ ցավ, մեխանիզմները, բուժման սկզբունքները
Օր 3՝ օգոստոսի 7	
15:00-17:00	**Դասախոսություն** Տարեցների ցավ, առանձնահատկությունները, բուժման սկզբունքները: Մանկական ցավ, առանձնահատկությունները, բուժման սկզբունքները
17:00-17:10	Ընդմիջում
17:10-18:30	**Դասախոսություն**

	Բուժում օփիոիդներով, օփիոիդների ռոտացիա
18:30-19:00	**Գործնական աշխատանք** Օփիոիդների փոխարինման հաշվարկի վարժություններ
Օր 4՝ օգոստոսի 8	
15:00-17:00	**Դասախոսություն** Շնչարգելություն, տերմինալ հևոց, կառավարման սկզբունքները
17:00-17:10	Ընդմիջում
17:10-17:40	**Գործնական աշխատանք** Խմբային վարժություն ձողիկներով, շնչառական վարժություններ, դերային խաղեր
17:40-19:00	**Դասախոսություն** Պալիատիվ գերոնտոլոգիա
Օր 5՝ օգոստոսի 9	
15:00-17:00	**Դասախոսություն** Անհետաձգելի իրավիճակներ պալիատիվ խնամքի պացիենտների մոտ
17:00-17:10	Ընդմիջում
17:10-18:30	**Դասախոսություն** Վատ լուրի հայտնումը
18:30-19:00	**Գործնական աշխատանք** Վատ լուր հայտնելու դերային խաղեր
Շաբաթ 2	
Օր 1՝ օգոստոսի 12	
15:00-17:00	**Դասախոսություն** Անորեքսիա, կախեքսիա, սննդային խնդիրներ պալիատիվ խնամքի պացիենտների մոտ
17:00-17:10	Ընդմիջում
17:10-19:10	**Դասախոսություն** Աղիքային ստոմայի խնամք: Լիմֆոստազի ժամանակակից մոտեցումները
Օր 2՝ օգոստոսի 13	
15:00-17:00	**Դասախոսություն** Անորեքսիա, կախեքսիա, սննդային խնդիրներ պալիատիվ խնամքի պացիենտների մոտ (շարունակություն)
17:00-17:10	Ընդմիջում
17:10-18:10	**Գործնական աշխատանք** Կլինիկական դեպքերի քննարկում
18:10-19:10	**Դասախոսություն** Այրման համախտանիշ
Օր 3՝ օգոստոսի 14	
15:00-17:00	**Դասախոսություն** Ստամոքս-աղիքային խանգարումներ, սրտխառնոց, փսխում
17:00-17:10	Ընդմիջում
17:10-19:10	**Դասախոսություն** Ստամոքս-աղիքային խանգարումներ, փորկապություն, փորլուծություն, աղիքային անանցանելիություն
Օր 4՝ օգոստոսի 15	
15:00-17:00	**Դասախոսություն** Միզային խնդիրներ պալիատիվ խնամքի պացիենտների մոտ: Մաշկի խնամք, ժամանակակից մոտեցումներ
17:00-17:10	Ընդմիջում
17:10-18:10	**Դասախոսություն** Անքնություն, դեպրեսիա: Զառանցանք, անհանգստություն, տագնապ

18:10-19:10	**Գործնական աշխատանք** Առանձին դեպքերի քննարկում
Օր 5՝ օգոստոսի 16	
15:00-17:00	**Դասախոսություն** Կյանքի պահպանման դադարեցում, դժվար որոշումներ
17:00-17:10	Ընդմիջում
17:10-18:10	**Դասախոսություն** Կյանքի վերջին ժամերի կառավարումը
18:10-19:10	**Գործնական աշխատանք** Թիմային աշխատանք, գործնական թիմային դերախաղեր

Դասավանդող՝ Նարինե Մովսիսյան:

Գործնական փորձը պալիատիվ խնամքի դասընթացի կարևոր բաղկացուցիչն է, որը հնարավորություն է տալիս մասնակիցներին կիրառել իրենց ստացած տեսական գիտելիքները իրական միջավայրում: Սա ներառում է հետևյալ հիմնական ասպեկտները.

1. Աշխատանք իրական հիվանդների հետ. մասնակիցները հնարավորություն են ստանում աշխատել հիվանդանոցներում, պալիատիվ խնամքի կենտրոններում կամ տնային պայմաններում՝ իրական հիվանդների հետ: Սա նրանց թույլ է տալիս սովորել, թե ինչպես կառավարել ցավը, վերահսկել ախտանշանները, ինչպես նաև ապահովել հոգեբանական աջակցություն:
2. Մասնագիտական վերահսկողություն. գործնական աշխատանքը սովորաբար իրականացվում է փորձառու մասնագետների վերահսկողության ներքո: Սա ապահովում է, որ մասնակիցները կարողանան հարցեր տալ և ստանալ աջակցություն իրենց աշխատանքում՝ սովորելու նպատակով:
3. Իրական դեպքերի վերլուծություն. մասնակիցները մասնակցում են գործնական սեմինարներին և քննարկումներին, որտեղ քննարկվում են իրական դեպքեր և իրավիճակներ, որոնք կարող են հանդիպել պալիատիվ խնամքի ընթացքում:

Այս բոլոր բաղադրիչները նպաստում են, որ մասնակիցները զարգացնեն իրենց մասնագիտական հմտությունները և պատրաստ լինեն աշխատել պալիատիվ խնամքի ոլորտում՝ ապահովելով բարձրորակ և հումանիտար խնամք հիվանդներին և նրանց ընտանիքներին: